

ՄԱՍՆԱՆՈՒՄԻՆԻՍՏՆԵՐԻՆ

Պուշկարիոյ համար	12 մր
Տարեկան	6 "
Վեցամսեայ	6 "
Արտասահմանի համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Սակրիկայի համար	3 տր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	1.50 "

Մանուգրան տղր սուս ըին երեսն համար 40 ս. իսկ վերջին երեսն համար 20 սակրիկ է. երեսն անգամ սակրիկներու համար 20 0/0 զեղջ կըլ յայ:

Վառնայի համար ձևի 40 սակրիկ

ՇԱԲԱԹ

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՈՒՄԻՆԻՍՏՆԵՐԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՄԻՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

R. P. Kalmencarian,
(Aubriche)
Mekhitaristengasse
W. 4.
Vienna

Редакция «ВѢСТНИКЪ»
„Л. ржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoun“
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
ձևի 3
(20 ՍԱԿՐԻԿ)
Պուշկարիոյ համար
ձևի 6
(15 ՍԱԿՐԻԿ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

«ՇԱԲԱԹ»-Ի ԲԱՍՏԱՆՈՒՄԻ ԳՐՈՒՄԸ ԲԱՃԵՆԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՖԵՏԱՅԻՆԵՐՈՒ ԿՈՒԻԸ

Սահմանազրկէն «Գրոշակ» ուղղուած հեռագիր մը կը ծանուցանէր, թէ հայ խումբերու և թուրք զօրքին միջև բաղխում մը անցի ունեցած է: Հեռագիրը արտասպասեցաւ «Պրո Արմէնիս» յի և «Շարժում» մէջ:

Մենք հիմա իրազէ կաշնակցական ընկերէ մը նամակ մը ստացաւք, որու մէջ մեզ յիւրիւրայի ֆէտայական կռուի մասին մանրամասնութիւններ կը պարզուի:

Կաւր ընդած է անհզ և տեւած է 3.4 օր: Ինչպէս են 36 դաշնակցականներ, բայց մօտ 40 հոգի կարողացած են թիւրք շրջան կտրելով հասնիլ իրենց նւարական կէտ որոշուած վայրը:

Թշնամիներու կողմէ սպանուած են 400 հոգի և անլի, որոնց մէջ կան զօրապետներ և սպաներ:

Այս մի փառաւոր յաղթութիւն է դաշնակցական զինակիր ընկերներու կողմէ և պատիւ կը բերէ զանոնք զինուոր կազմակերպութեան, որ ընկերակցութեան է խոշորագոյն առջեւ և առանց շեղելու իրեն առջեւ տրուած նպատակէն անյողողող կերպով կը շարունակէ իր յեղափոխական ուղիին մէջ դէպի սոսի, ամէն քայլին հարուածելով թշնամին և հարթելով հայ ազատագրութեան ճանապարհը:

ՊՕՐԻՍ ՍԱՐԱՓՕԿ ԵՒ ԴԱՅՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ

Սօֆիայէն մեզ կը գրեն: «Շարժում» արդէն հաղորդեց Պօրիս Սարաֆօվի և Վարդօի միջև անցի ունեցած ընկերական տեսակցութիւնը: Այժմ այդ տեսակցութիւնը անցի ունեցաւ և Վարդօ պատմեց մեզ յետոյ, որ

աւսօր դափնեայ յաղթական պատկերով զարգարուած Սարաֆօվը նոյն մատչելի ընկերն է, ինչ որ էր մի քանի տարի առաջ իր սպայի համետ վիճակին մէջ:

Սարաֆօվը շատ յուզուած է հայերու կողմէն իրեն ցոյց տրուած համակրութեան համար, որուն իրիւ փաստ հերոսը մէջ տեղ կը բերէ Հ. Յ. Գաշնակցութեան Վառնայի կոմիտէին, «Շարժում» ի մարտագրութեան և Ֆիլիպպի Գաշնակցականներուն իրեն ուղղած Համակրական հեռագիրները իր ողջամբ Պուլկարիա հասնելուն առթիւ: Նա յայտարարած է, որ հայկական գնահատումը իրեն համար անլի գիտաբանի է, որովհետեւ նա տեղի կունենայ օտար ցեղի պատկանող յեղափոխականներէ, որոնք անլի անկողմնակալ կերպով կարող են վերաբերուիլ դէպի մակեդոնական յեղափոխական գործիչները:

Սարաֆօվը անհամար փորձանքներէ ազատուելէ յետոյ, այսօր ալ նոյն անկողողող, կորովի և պատերազմիկ յեղափոխական վարիչը կը մնայ և է հայութեան և հայ յեղափոխութեան շնորհ բարեկամը:

Սօֆիա 26 նոյ.

ՁԷՆՔ ՏՈՒՆՔ

Ձեզի է որ կուղղեմ, Հայ ցեղի արու պաւկները. և ձեզի, անոր քնքոյլ ու նազելի պարմանուհիները, ձեզի, ձեզի է որ կուղղեմ նախատինքով ու յանգիմանութեամբ լիցուն այս կրքի տողերը:

Դուք՝ որ ձեր լայնչի կուրծքին մետաղացած պինդ սկզբներով ամբօրէն, անընարար իօրէն սեղմած, գրկած էք բոլոր կսկիծներն ու դառնութիւնները Հայ ճառագայնքին, առանց երբեք կրքելու, փլչելու անոր ահաւոր զանգուածին ծանրութեանը տակ. դուք՝ որ յոյսի ու

երջանկութեան խանդավառ րուպէի մը մէջ, խելայի զօրէն նետուեցաք կռուի դաշար անթիւ ու անհամար թշնամիներու արիւնով ձեր գաշոյնները սլելու և անոնց գեանամած գիակներուն զաղրելի տեսարանին առջեւ ձեր համարիւն եղբայրներուն լացին ու կոծին վրէժը լազեցնելու համար: Դուք՝ բոլոր հոսովու, առոյց, ճարպիկ ու գործունեայ հայ կտրիճներ, քայքեր, երիտասարդներ, և դուք՝ հայ արգանդին բեղուն ու նուիրական ներկայացուցիչներ. վերջապէս դուք, ամենքդ, մայրեր ու աիկիւններ, ծերեր ու տղաներ, պառուներ ու աղլիկներ, որ այս վայրկեանիս, վտարանդի ու հալածանքին, վարանուծի սաւառնաթեւ ուրուականէն քշուած, սարեր ու ձորեր կտրելով, ծովեր ու ովկիանոսներ ճեղքելով՝ հեռու՝ հեռու՝ կը փախչիք ձեր հայրենի երգիքներէն հեւի հեւ ու շնչուսպառ, գիտէ՞ք, գիտէ՞ք արդեօք, կամ բերք ու զեցի՞ք գիտնալ թէ որու՞ կը թողուք հոն, ցաւին ու շարչարանքին մէջ զեռ ողջ մնացած այն ազնիւ ու անընկճելի ձեր քոյրերն և եղբայրները, որոնք աչքերնին ձեզի յստած, անհամբեր, սիրտհատնումներով կը սպասեն ոչ թէ ձեր հացին ու շուրիին, այլ միջոցի մը, գործիքի մը, զէնքի մը՝ պաշտպանուելու, փրկուելու, մեռնելու, մեռնելու համար: Գիտէ՞ք, գիտէ՞ք արդեօք, կամ երբեք ուղեցի՞ք գիտնալ ասիկա: Մինչ դուք—մեծ ապատիւ անձնատուութիւններ— ձեր թանձր գիւնակով ու ծանր փորով շուայտ ու մեղկ կեանքի մը գիւնովութեան մէջ թաթիլուած, մոլեգնաբար ձեր զգուելի կիրքերուն կը հետապնդէք ազատ ու անկաշկանդ արտասահմանի հողին վրայ, զիբար բզկտելու քինախնդիր վայրենութեամբ, մեր սուրբ նահատակներուն անունը շահագործելով, անոնց ապրած ու զիւցազնօրէն կուած հայրենի լեռներուն ամենի շքեղու-

թիւնը և աղբիւրներուն ջինջ պայծառութիւնը ձեր անպարկեշտ շրթունքներովը պղծելով: հոն, լքուածի ու յուսահատութեան տխուր այդ երկրին մէջ, թրիքի ու քաղորի դէզին քով, ձեր կուշտէն ելած ձեր տարաբազդ եղբայրն է, որ զարնուած՝ արիւնի մէջ կը լողայ անպաշտպան: Իսկ դուք, փոխանակ որտակցութեան զեղումով մը դէպի անոր փարելու և շղուտ ու կորովի ձեռքով մը զայն վեր բարձրացնելու, ձեր խոստովանուած վատարտութեամբ զեռ երէկ սիրտ ըրիք եղբայրասպան դաշոյնը անոր կուշտին մխելու՝ գազանային փոխվրէժի շիւտուած, շի տեսնուած անխղճութեամբ:

Ոչ ձեր խեղկատակ պոռչուքները, ոչ ալ անմիտ ու փուճ ընդդիմախօսութիւնները, ոչ ձեր զիկզակ պատճառաբանութիւններն ու զարտուղի պայքարները կրնան պարտկել անհոգութեան, չկամութեան ու անգործութեան մեղադրանքները՝ որոնք ձեր վրայ կը տեղան սառապանքի աշխարհէն, և որոնց տարափին տակ՝ դուք ամենքդ ամօթապալտ ու շիկնազէմ՝ քովնտի մասյլ խածատանքներով արդարանալ կը նկատիք:

Փրկութիւն պէտք է մեր ցեղին. իսկ փրկութիւնը զէնքով միայն կրնանք գտնել: Արտասահմանի անկիւններուն մէջ սին վէճերով և ճիշտն ըսելով ուղղութիւն ժամաղաճառութիւններով ինքզինքնին սպառող արարածները եթէ որոշեն ու աշխատին միայն մէյմէկ զէնք զրկել Հայրենիքի սառապող իրենց եղբայրներուն, հարիւր հազարներով պատրաստ, զինուած կուռղներ պիտի ունենանք, որոնց արիւնը մեր փրկութիւնը անվրէժ պիտի սրբագործէ:

Ահա բուն, իսկական գործը, սին վէճերէ, մեղապարտ ցուցադրումներէ զերմ, որուն պէտք է ձգտին արտասահմանի Հայե-

ընդհանրաբար չի բեր թող մէկ զէնք, միայն մէկ զէնք նուրիք իր տառապող եղբոր և իր գերագոյն պարտքը արդէն կատարած պիտի ըլլայ: Ահա նաև միութիւնը իսկական գործի մէջ, ճշմարիտ միութիւնը որ խեղկատակներու ամէն քաջքը շուքները և այլասերածներու բուրբ ջանքերը երկպառակութեանց յաւերժացումին համար, իսկոյն ջուրը կը ձգէ:

ՀԱՅԱՆՊԱՍՏ ԺՈՂՈՎՆԵՐ ՖԻՍԱՆՍԱԿԱՆ ՄԷՋ

Ֆրանսական մամուլին մէկ քանի աղտոտ և երկայացող ցիւններուն քով որոնց արարքները քիչ մը անդին այժմանաբար անք, և այն ցաւալի ընթացքին հանդէպ, գործարարային արտաքին գործերու նախարարը այնքան անխուսափաբար և անպատկառօրէն ցոյց տուաւ զէպի հայկական դատը, մը-խիթարութիւն մըն է մեզի համար անսեղ ազնիւ ու ասպիտական Ֆրանսայի հարազատ ու անկեղծ գաւազները, որոնք անդու ջանքերով իրենց հայկականները թուրքիոյ տառապեալ ժողովուրդներու վրեժակին հետ կը ծանօթացնեն, քաղաքէ քաղաք կը շրջին, կը բանախօսեն, կը քարոզեն, կը զբոսնեն և արդարութեան գործադրութիւնը կը պահանջեն: Աւ մերթ անոնց արձագանքը լսելով՝ ակամայ մեր միտքը կուզայ թէ հայ անուներ իրենց վրայ կը բռնուի շատ անհասանելի օտարներու հարիւրորդ մասին չափ իսկ չեն գոչեր իրենց հանգիստէն, հաճոյքէն ու ինչքէն իրենց ցեղին փրկութիւնը յաջողցնելու համար: Այս պարագան է որ այդ հայապատ շարժումներուն բացառիկ նշանակութիւն մը կուտայ յայտ մեր, և շորհակալութեան ու երախտիքի պարտք մը կը դնէ մեր վրայ:

Այս անգամ վայրենիք, Ֆրանսայի հարաւային մէկ քաղաքէն է որ կը հասնի այդ արձագանքը: Ն. Յ. Չիլին, Լիօնի բժշկական համալսարանին վարիչը, տօք. Լորդէ, վայրենիք քաղաքէն է մասնաւորապէս Սուլթան Համիտի զոհերուն ի նպատակ հասարակաց կարծիքը լուսաբանելու համար, խումբ մը տեղացիներու հրա-

հերին վրայ: 1500 ունկնդիրներու բազմութեան մը առջեւ և քաղաքապետ Պ. Շալամէ յայտնի ազատականին նախագահութեամբ է պարզ ու մանրամասն նկարագրութիւնն ընելու համար այն գազանային նախնիրներուն, որոնք Հայաստանի ու Կ. Պոլսոյ մէջ օր ցերեկով գործուեցան, Աւելի իրականին ու ճշմարտին նախնաձօնողի՝ համակրելի տօքթորը մասնաւորապէս պատմած է իր իսկ աչքերով Պոլսոյ ջարդերու վաղորդանքին տեսած անուշիկ տեսարանները. կտրքերու մէջ գիզուած դիակներ, կէս ողջ, կէս մեռած տասնամեայ տղաներ՝ որոքի տասնեակ հարուածներով յօշոտուած, տեսարաններ՝ որոնք մեզի շատ մօտէն ծանօթ են և որոնց վրայ աւելորդ է երկար ծանր նայլ:

Աստուած, յետոյ, ծանրանալով իր երկրին պատասխանատուութեան վրայ պարզել է Հանոօ փաշայի արտաքին մեղսակցութիւնը, և ինքզինքը աւելի լուսաւոր ցցուցեր է ներկայ նախարար Պ. Տէլքասէի մասին: Ան յայտնելի որ Պ. Տէլքասէ իր արտաքին նախորդին շաղկէ չի պիտի ուզէ ընթանալ, բայց թէ նա սարակաց կարծիքի բուռն հոտանք մը պէտք է ուժ ստայ նախարարին բարեացակամութեան, ժողովուրդին անկէ պիտու թիւնները գործի մղելու ջանալ:

Պ. Շալամէ, ժողովը փակելով, շնորհակալութիւն յայտնել է ատենախօսին, զայն ապահովեցնելով որ քողոր ազատական մտքերը իրեն հետ պիտի ըլլան և թէ այդ օրունց ցոյցերը իրենց վաղորդանք պիտի ունենան, Բուռն խանդավառութեան մը մէջ հետեւեալ բանաձեւը քուէարկուեց ու զրկուեց է արտաքին գործոց նախարարին:

Լիօնի բժշկական համալսարանի վարիչ, տօք. Լորդէի բանախօսութեան հետեւեալով, որուն կը նախագահէր վալանսի քաղաքապետ Պ. Շալամէ, վալանսի 1100 քաղաքացիներ կը նշանակեն Սուլթան Համիտը և պարտք կը դնեն արտաքին գործոց նախարարներուն վրայ նախաձեռնարկ ըլլալու միջոցառումները ստաջարիկին՝ ի միասին Հայաստանի և Մակեդոնիոյ ջարդերու զգարումին: «Ուրիշ գումարում մըն ալ գարձեալ Հայերու ի նպատակ տեղի ունեցեր է Ֆրանսայի մէջ քաղաքին ժողովուրդա-

յին ու գործակցական Ակումբին մէջ՝ ուր հետեւեալ բանաձեւը քուէարկուեց է:

Վէլզի ժողովուրդային ու գործակցական Ակումբին անդամները՝ թւով 300. Պ. Բոլ վայրէջի հայկական ջարդերու մասին մէկ բանախօսութիւնը լսելով... հաւածականներուն կը յայտնեն իրենց գործուն համակրութեան արտայայտութիւնը, և կը զանազան ժողովրդային գանձուածներու խիզճը, զգուանքէն բախտացած ստիպէ վերջապէս պետութիւնները նորագոյն ժամանակներու ամենամեծ ամօթը եղող այս սարսափներու վերջ մը տալու:»

ՍԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հնչակեան եղբայրասպանութիւնները, ինչպէս ընթացողներուն յայտնի է, եւրոպական մամուլին ստոր մէկ մասին առիթը տուին հայ ցեղին հանդէպ իր ժանրը թափելու: Բացի անգլիականէն, որ գոնէ իր երկրին մէջ կ'ստորուած այդ քստմանի իր հետեւողներուն մասին աւելի խստօրէն խօսելու իրաւունք մը կ'ընայ ունենայ: Ֆրանսական սոցալոգ մամուլն ալ վայրագ մոլեղանութեամբ մը սկսաւ յարձակել հայ ցեղին վրայ նախատել, զպարտել ու դատապարտել շանտիով գայն:

Այս ամենուն մէջ Ռուսիան է որ յայտնի ու գողտի իր դժոխային դերը կը խաղայ: Հայ ցեղը վարկաբեկելու և եւրոպայի հասարակաց կարծիքին առջեւ անոր ձայնը խեղդելու համար աւելի նպաստաւոր հանգամանք մը պիտի չի կրնար գտնուի մանաւանդ երբ կուտածական ինդիւստրիան ստիպել իր յայտնեցողութեանը անգամ մըն ալ շեշտելու բնոյթն ունէին: Այդ պատճառաւ էր որ Ռուսիա աշխատեցաւ կաշառել կամ շլացնել Ֆրանսական մամուլին աղտոտ մտքը և իր գաղտնի գործակալներով Հայոց թեան վարկը կտորելու ճիգեր ընել, հնչակեան եղբայրասպանութիւնը և կալուածներու գրաւման խնդիրը իրարու խառնելով, որոնք երբէք ունէ առնչութիւն չեն կրնար ունենալ սակայն: Այս ոգով ներշնչուած յօդուաներ երեսն եկան վերջերս «Բաթրի»-ի, «Ելք»-ի, «Կուրա»-ի և քիչ մըն

ալ «Եման»-ի մէջ, որուն հայասիրութիւնը սակայն ամէն կասկածէ վեր է մեզի համար: «Բաթրի»-ն, որուն խմբագիրը հանրածանօթ հայատեսաց Վէլզիօսի հետ ունեցած տեսակցութեանէն ի վեր չի դադարի Հայերը հաշտելու: Ըբուլթիւնը ունեցած էր եզրուութիւնը ծանուցած ատեն չորս մեծազորող որակաւորով հասարակաց ուշադրութիւնը իր դերութեան վրայ հրաւիրելու:

Հայ ահաբեկիչներ, Լոնտոնի մարդասպանները, Սոսկալի աւազակներ, Ասիական անարքիտները, Ահա թէ ինչ սոսկալի անուներով կը մկրտէր ամբողջ հայ ցեղը, զոր ամէն ընկերական օրէնքի ու կարգի թշնամի կը հռչակէր, և որուն ինչպատ Արեւմտաքի զթութիւնը խնդրելով, մեծ սխալ մը գործուած կը նկատէր:

Միւս կողմէն սոսկական ցորձակայները անընդհատ սուտերով ու զրպարտութիւններով կու գային ուժ տալ այս դաւադրական վարկաբեկութեան, Հայերը ներկայացնելով իր խստանկիւններ, թուրքիոյ անդամատու թեան աշխատող և անձ Հայաստանի մը իրագործութիւն հետամուտ: Այս սուտը զոր «Եման» վրէժի սուտ հայաստացի իրերթ ստեղծած է, կը ամսնէ այդ գրութեանց բուն աղբւրս: Այսինքն ուստական լիբալութիւն մը ըլլալը, այդ զղուշի արարածները իրենց հալածանքներու մէջ այն ստիճան կաւարացած են որ, բնաւ չեն օգտեր հակնալ թխել ու գաճ սուտերուն տարապայման անհաւանականութիւնը, և կրնան սյնալ իր բանը, որոնք ամենաարգէտ մար մը իսկ պիտի չի հաւատար: Այսպէս այդ գործակալները կը պնդեն թէ հայ եկեղեցւոյ եկամուտները հայ յեղափոխականներու քսակը պարտաւայնելու կը ծառայեն եղեր, թէ այդ կալուածներու ամբողջ հայութեան պատկառելի յայտարարելով՝ ապացուցած կը լրան եղեր «Մեծ Հայաստանի» մը կազմութեան հետապնդներին:

Ամէն հայ, և թերեւս ուրիշ արտաքին գիտէ թէ ամէն ազգի մէջ եկեղեցական կալուածներու հատկէն ազգի մը համար ոչ մէկ չափ չի կայ: Ուր մնաց Ռուսիոյ հայոց կալուածներէն, և այն ալ յեղափոխական անուակին համար, քիչ շատ տրամաբանութիւն ունեցող անհատ իսկոյն

ՓՅԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

ՆՈՒՆԵՐ Ս. Չ. — ԻՆ
Գ.ՈՒՆ Գ.

Նախժամ Պէտրոպոլսոյ և Արշակի նշանակելու անցել էր մի շաբաթ: Իսպոլի շքեղ տներին մէկի փարթև մօրէն կահարոված սեղանստան մէջ՝ թէյի սեղանի շուրջը երեկոյնան հաւատարմի էին ևրիք հայ պարոններ և ոտուտ հիններ, ու թէյի քաթակները առջևէն զրած զուցում էին: Պարոններն էին ինժինէր Մարկոսովը, անտառագետ Գրիգորովը և Արշակը, իսկ ոտուտ հինները վերոյիշել էր կոհակ հայերի կիները և Արշակի նշանածը՝ Նատկէտան: Երեք սեւամազ զլուրներն ու թխամորթ անձական դիւքերն առջեւ տեղաւորուած երեք շի-

կահներ և պիտակամորթ կոնացի կերպարանքները, տառապից կախված լամբայի երեքտրական պայծառ լոյսի տակ սուր կերպով երեւան էին հանուժ հայ ու ոտու ցեղերի մէջ: Եղած ֆիզիքական կոնտրաստը՝ թերեւս միակ զլուսաւոր պատճառը այդ տարբեր ցեղերի, տարբեր սեռերի ներկայացուցչներին իրար մօտեցալու և միացած կեանք կազմելու համար, ինժինէր Մարկոսովը և անտառագետ Գրիգորովը, ոչ միայն հայ ցեղից էին սերված, այլ և նրանք մի քանի տարիներ առաջ հայ յեղափոխականներին պարտալուծներէց էին համարվում և մի քիչ էլ հռչակ էին ստացել այդ ասպարեզում: Արշակը վերջին ետ ընկրկողն էր, որը այսօր եկել իր վաղեմի ուսուցիչների մօտ, ճշմարիտ հետեւողականութեան օրէնքի համաձայն, Երկու վերոյիշեալ պարոնները լաւ պաշտօններ

գտնելու ցեղիկահներ ուսպիտակամորթ ուսուցիչների հետ ամուսնանալուց յետոյ, այլևս բոլորովին քաշվել էին հայ հասարակական կեանքից ու օտարացած կեանք էին վարում մասամբ շնորհիւ հայ հասարակութեան մէջ զէպի իրենց սկզբած արհամարհանքից, մասամբ իրենց օտար կանանց ազդեցութեան և մասամբ էլ իրենց անձնական ցեղական զգայմունքների թուլութեան:

Ուրիշն այդպէս, իր արդէն բաւական հասարցած փորը շփելով՝ ասանց Մարկոսովը, իօօքը Արշակին ուղղելով, թիֆլիզի հայ ինտիլիգենտների քեզ էլ արտաքին իր միջոց, որովհետեւ իրրու մտքը զուքեզ թող տեղը նշանվել քո սիրած ոտու աղջկայ հետ ու կրկին ապացուցեց թէ հայը որչափ էլ զարգացած լինի, որչափ էլ կոսմոպոլիտական արամադրութիւններով օժտված, այնուս-

մենայնիւ նա անկարող է ազատիլ աւանդական մի քանի անմիտ նախապաշարութիւններից: Երեսակայում եմ թէ ինչ տանջանքների ենթարկեցին թէ փոփոցում, թն տնկում: Ո՞վ գիտէ թէ քանի քանի զեղեկ ու սղեղ աչքեր յանդիմանական անարկներ գցեցին վրայ ձ իրենց մտքերում ամենաուժեղ անարգական մակդիրները գնելով քեզ, Երեսու մի թիֆլիզցի: Գիտեմ, ես էլ եմ եղել քո վիճակում, ես էլ եմ տարել այդ փոքրիկ, բայց մարդիկ կատաղեցնող, չարացնող տանջանքներ: Վերջի վերջ երբ իրազայել եմ, մի քիչ իրաւունք եմ տւել մեր ցեղակիցներին, զգալով որ նրանք զապազանցութեան մէջ են ընկնում, իրենց ատելութեան մէջ, իրաւունք եմ տւել, որովհետեւ մեր ժողովուրդը փոքր և թույլ լինելով, միշտ գատապարտում են այն երեւոյթները:

կրնայ ըմբռնել այս փաստին բոլոր դատարկութիւնը: Նոյնպէս ամէն մարդ գիտէ թէ հայ յեղափոխականներու նպատակն է բարեկրօնը առնուառն եւ քաղաքացիական իրաւունքներու վերականգնումը: Ինքնավար երկրի մը վերածելը թրքական Հայաստանը, պահանջ գոր մայրս 11 ժողովուրդ արգէն եւրոպայի վեց մեծ պետութիւնները իրենց վաւերացուցած են: Այս կերպով «Մեծ Հայաստանի» փաստաբանութիւնն ալ չուրը կ'իյնայ:

Իսոյ այդ ուսու գործակալները այն աստիճան լրջութեամբ կը հասցնեն գործը որ, իւրապէս ընթացողները բացարձակ ապուշներու տակ կը գնեն: Անա թէ ինչ կըսեն վերջապէս «Եօլու» թերթին մէջ:

«Հայը զեռ վերջերս կրնար յուսալ որ պետութիւնները հասարակաց կարիքն մղուած՝ տեղի պիտի տան անոր առջեւ, եւ Մակեդոնիոյ մէջ միջամտութիւն մը պիտի ընէին, որպէսզի անկէ վանեն թուրքերն ու Պուլկարները եւ հոն հիմնեն համաբար հայկական իշխանութիւնը: Բայց պետութիւնները խոհեմարար մեթոդներ այդ տեսակ անկարելի ընթացք մը բռնել:

Պատուածքը այնքան անհեթեթ է որ, մեր կողմէն բառ մը անգամ աւելցնել չենք փորձեր: Բայց կը ցաւինք որ Յրանսայի արտաքին գործերու նախարարը, որ մէկէ աւելի անգամ եր իր համակրութիւնը ցոյց տուած է մեր դատին, ազգուած կերեւայ հնչակեան եզրայրասպանութեան առթիւ հրապարակ ելած նպատակաւ որ հրատարակութիւններէն, եւ Ռուսիոյ հաճելի երեւնալու համար անուշա, որուն արտաք բաւական վշտացուցած էր վերջերս, չի գիշարի խորհրդարանին մէջ Հայաստանի անունը անգամ բերան առնելու:

Հնչակեան միութեան ողբալի հետեւանքներէն մէկն ալ համակրութեան այս կարուստը իզու, զոր այնքան սուղ գնով մը չաւած էինք դեռ երկէ: Ու զեռ այդ տեսակ անձոնի անկերպարան ու աննպատակ միութեան ջատագովելը չեն անցնար հրապարակը պղտորել: Արդեօք աստեք բուն միջբողոքները չեն մեզ հիւժող ներքին արտաքին:

Պ. Մինաս Չերազ, իր վերջին «Առաջնորդ» մէջ այս բոլորը մանրամասնօրէն պարզելէ ետքը՝ յաջողապէս կը պաշտպանէ մեր ցեղին վարկը այդ խառնակիչներու դէմ:

Պ. Չերազի այս ընթացքը գովելի է: Միեւնոյն ատեն չենք կրնար մեր զգուշանքը չի յայտնել սա Բարիքի ցաւագործին, Անահիտի Զօպանեանին անորակիւր ու զուստանական զիրքին հանդէպ: Այդ սուկայի կեղծաւորը, որ բերանը բացած ատեն իրմէ գատ ոչ մէկուս տալ չուր անկեղծութիւնը, այդ ողորմելի լարախաղացը, որ «Գրօշակեան» դրութիւնը» քննադատելու համար վայրկեան մը, տող մը, կէս մը չէր փախցնէր, այդ անզուգական եսախտաւորը խօսք մը, բառ մը չի գտաւ սահնակեան եղբայրասպանութեան ու խայտառակութիւններու դէմ ըսելու համար: Կերեւայ թէ իր չունեցած անկեղծութիւնը այս անգամ ալ գինքը պատանձու մի մղած է վերջապէս:

Այս բոլորին հանդէպ Հ. Յ. Գալանակցութեան կը մնայ իրրեւ անաշու դատարար եւ հայկ. յեղափոխութիւնը ներկայացնող միակ բարձր մարտին՝ պաշտօնագրով մը եւրոպ. մամուլին հաղորդել, որ այդ դաւաճողութիւնները եւ ընկերասպան ու ճիւղները վերաբարեկու չեն հայութեան եւ հայ յեղափոխութեան: Զարագործ խմբակի մը շահատակութեանց համար կարելի չէ ամբողջ խողովորդ մը եւ անոր յեղափոխական կազմակերպութիւնը յանցաւոր բռնել:

Հ. Յ. Գալանակցութեան Ամերիկայի կեդր. կոմիտէն ըրաւ զայս Ամերիկայի մէջ Անհրաժեշտ է որ Արեւմտ. եան Բիւրօն ալ նոյնն ընէ եւրոպայի մէջ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍՕՑԻԱԼԻՍՏ

Պատահմամբ ձեռքս տնցաւ «Վերածնութիւն» հնչակեան թերթի վերջին թիւը, որուն մէջ հրատարակուած է «Վառօգ» կեղծ անունով գրութիւն մը, որ կը ձգտի մարտը և յարգելի անուն մը մտնել:

Այդ գրութեան մէջ ճիշդ կը թափուի կ'սկսած յարուցանել «Պետօ» կենսագրականին և աշխատութիւն մէջ սպրդած է տպագրական սխալ մը. — Հրարու խի տեղ պէտք է կարդալ «Վառօգ»:

Աւա՛ղ, ես շատ էի վրդովուած ցեղակիցներէս, նախկին ընկերներէս արհամարհանքին, արմատանալու պատճառով. ես էլ նրանց էի արհամարհում, ուղղու էի ասել, բայց այսօր ոչ միայն չեմ ուզում ասել, այլեւ անտարբեր չեմ կարող մնալ դէպի իմ ցեղին վրեժակամ տառապանքները, թէեւ չեմ էլ կարողանում ոնէ կերպով մասնակից լինել այդ տառապանքները մեղմացնելու գործին:

Ինչպիսի երևում է կրկին նախկին ազգասէր ընկերակից մէկին ես հանգիստել, հեղինակով և իր կանաչագոյն աչքերը խոժոժելով միջամտեց Մարկոսովի կիւրը—Մարուսեան, ազգայնական քնքուղ զգացումները կրկին սկսել են բողբոջներ արձակել:

Այո, Մարուսյա, այսօր Շեռտեանին պատահեցի. աւելի ճիշտը նա եկաւ իմ գործատեղին և հայկական յեղափոխութեան համար զբամ ու-

խատութիւններուն հրատարակութեան մասին, որուն համար «Նարժու» դրամ հանդանակեց:

Մենք կարեւորութիւն չենք տար այդ օրինակ իմաստակ և սընամէջ հրատարակութեանց, որունք տրամադրութիւն ունին ամէն մաքուր միջոցառում ապակաւնել: Պետօի աշխատութիւններուն համար պարտաւորութիւնները գիտեն այդ գործի ինչ վիճակի մէջ ըլլալը և հանդիպած զանա. զան պաշտպանութիւնը ոչ մենք ընկերներս և ոչ ալ «Նարժու» պարտաւոր ենք հաշիւ ներկայացնել:

Սօֆիս 27 նոյ. 1908

Րուստոք, 23 նոյ. 1908

Ելէկ գիշեր-տեղի ունեցաւ ի նըպաստ ազգային երկսեռ վարժարաններու սարքուած ընտանեկան պարահանդէսը ընդ հովանաւորութեամբ Տիար Սարգիս Գոյոյուճեանի:

Արական վարժարանի մեծ սրահը շքեղապէս զարդարուած էր դրօշակներով, գորգերով, ճաշարանի եւ շքեղասեղանի համար զատ-զատ սենեակներ պատրաստուած էին: Մէկ խօսքով ու եւ ջանք չէր զլացուած հանդէսի շքեղութեանը եւ ճաշակաւորութեանը համար:

Հանդէսը բացուեցաւ ժամը ճիշդ 9ին եւ անմիջապէս պարերն ու խաղերը սկսան: Հակառակ արող անձրեւոտ օդին Ռուստոքցիներու մեծամասնութիւնը այր, կին, երիտասարդ ամէնքն ալ փութացած էին ներկայ գտնուել: Միայն բացառութիւն կը կազմէին այն կարգ մը մասնաւոր հրաւիրեալները, որոնք մեծ կեդրոններու մէջ սպրած ըլլալով կը յուսացուէր որ աւելի լաւ ասուած են այստեսակ հանդէսներու ճաշակը եւ պիտի փութան ներկայ գտնուել եւ այսպէս քաջալեր հանդիսանալ հոգաբարձութեան: Բայց դեմքերը յոյսը յոյս մնաց եւ անոնք փայլեցան ըրենց բացակայութեամբը: Այս անգամ ինչպէս պիտի կարողանան ինքզինքնին արդարացնել մանաւանդ որ սարքուած հանդէսը զուտ ընտանեկան էր եւ

չիկային իրենց ականջին խորի հընչող յեղափոխական ճառեր, կամ ազգային երգեր որ վտանգուէին:

Հանդէսը մինչեւ առաւօտեան ժամը ճիշդ տեւեց, յորմէ յետոյ ժողովորդը մեկնեցաւ լաւ երեկոյթ մը վայելած ըլլալու գոհունակութեամբ:

Ծնորհուրդներ է հոգաբարձութիւնը որ ինչպէս ուրիշ առթիւ, նոյնպէս սոյն հանդէսին կարելի եղածը բրած էր ժողովրդեան հանգստութեան համար:

Ազգային վարժարանէն յետոյ, կիճաննք որ մանկապարտէզն ալ նոր տարւոյ առթիւ մտադրութիւն ունի զպրօցական հանդէս մը եւ վիճակահանութիւն մը սարգել: Յաջողութիւնն:

Աւելորդ չէ հոս կարծեմ յայտնել թէ՛ այս տարեշրջանին համար կազմուած է նոր խնամակալութիւն մը, որոնց անունները զանց կընենք հոս նշանակել իրենց համեստութիւնը վիրաւորած ըլլալու համար:

Տօ-Սի

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր բաժանորդներէն կը խնդրուի, որ փութացնեն մեզ զրկել իրենց բաժնեգիրները և յետամնաց պարտքերը: Պէտք է գիտնալ որ պարտաճանաչութիւնը առաջինութեամբ մըն է:

Գրաշարութիւնը սորվիլ ցանկացող աշակերտ մը կը փնտռուի: Գիմել «Նարժու» խմբագրութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Վառնայի «ՍԻՍԿԵԱՆ ՍԱՆՈՒՅ» Ընկերութիւնը վերակազմուեցաւ: Անոր նախկին հաշիւները յանձնուած են արգէն տեղւոյս Հոգաբարձութեան: Այս Ընկերութիւնը իր երկու տարուան գոյութեան ժամանակս միջոցին բաւական օգուտներ ընծայեց աշակերտութեան՝ առնելով բնագիտական գործիքներ, բուն, քանի որ նա մեզ իր անդամներին շարքից դուրս է արել: Մենք բացարձակ իրաւունք ունինք այդ հասարակութեան գործերով չը հետաքրքրվելու: Զարմանում եմ այդ հայ ազգասէրներին աներեսութեան վրա: Եթէ ինձ մօտ դար այդ Շեռտեան կողմէն հայ ազգասէրը, ես նրան կը վաճակի:

Հայ յեղափոխութիւնը ո՞րն է: Հայը ապագայ չունի. նա սոյսակ վաղ թէ ոչ պիտի ձուլի Ռուս պարիզ ցեղի մէջ. իսկ Տուրքաստանում պէտք է ջնջվի թուրքերի և քրդերի հալածանքից:

Այդ Շեռտեանները փառասէր, բայց ծոյլ մարդիկ են և իրենց շնչին փառասիրութեանը գոհացում տալու համար ինչ որ հայկական յեղափոխութիւն են հնարել և ապրում են հասարակութեան գրամներով:

(Շարունակելի)

որոնք կարող են նրա ցեղային գոյութեան համար վտանգաւոր լինել:

Քաղաքական ինքնուրոյեութիւնից զուրկ ժողովորդները, մանաւանդ երբ նրանց ցեղային գոյութեան օտար և արհապանող ցեղերի կողմից վտանգներ են ապահուում, շատ զլուրազգաց են լինում դէպի այն երեւոյթները, որոնք հետեւեանք խաղաղ բայց անխուսափելի ձուլումը, ոչնչացումն է: Եթէ իր մարդ գատնեք իհարկ է այդ ձուլումը ոչ մի նշանակութիւն չունի, բայց ցեղերը և նրանց գոյութիւնը անպատճառ պահպանելու ձգտում ունեցողները այդպէս չեն մտածում և նրանք էլ իրաւունք ունեն:

Մենք մեր ցեղի ցեղային պատկանութեան զգացումներով օժտուած անպատկան չենք: Եւ ցեղը մեզ արհամարհում է. եթէ ուժ ունենայ և կը հալածէ:

աշխարհագրական քարտեզներ, պատկերներ և տարբերակաւոր շակերաններուն զպրոցական պիտոյքներ:

Կերկայ տարեշրջանին ալ վարչութիւնս մտադիր է՝ ըստ Ընկերութեան կանոնագրի՝ հիմնել զպրոցական ԳՄԱԿԱՐԱՆ մը՝ սնունդ առանց գաղտնիքի ազատ աշակերտաց գիրք, տեսարակ ևն. ապէ՛ս աշակերտներուն օգտակար և միանգամայն գիրահասկնալի ոճով գրքեր պարունակող և՛րդ՝ այս բարի նըպատակը իրագործելու համար՝ մեր տրամադրութեան տակ մաս մը միայն զրոյս գտնուելուն՝ կը խնդրուի Յարգոյ Հայ Հասարակութեան, մանաւանդ զպրոցին յառաջդիմութեան փափաքող սղ նիւ Անհատներէն որ ձեռնուող ըլլան Ընկերութեան՝ իրենց գրամական նուէրներով և կամ ամսագրներով, որուն համար պէտք է դիմել մեր հաւաքիչ Յովհաննէս Սիմոնեանի:

Քաղցր է մեզ յուսալ, որ մեր այս համեստ խնդիրքը անխելի չի մնար և ուսման համակիրները քաջալերեն մեր այս օգտակար ձեռնարկը:

Վան. Ասենադարի Ասենապետ
Յ. Սիմոնեան Մ. Սեմովեան
16 Նոյ. 1903
Վատնա (Կնիք)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Թան» կը հազորդէ հեռուեալը:

«Լէչէրնա րօտա» մէկ յօդուածին առթիւ շատ կը խօսուի վերջերս:

Այդ յօդուածի մէջ կը պահանջուի, որ մէրտինանտ իշխանը ծանօթացնէ պուլգար ժողովրդին իր նախորդի Ալէքսանդր Պաթթըմպէրկ իշխանի երկունամակները: Այս նամակները Ալէքսանդրի քաղաքային կտակէն հանուելով տրուեցան Ռօֆիայի պալատին, այնտեղ պահուուու և անոր մահէն սուր տարի յետոյ լրագրներուն յայտնուել պայմանով: Կըսուի թէ այդ նամակներու մէջ կան տեղեր, որ խորհուրդ կուտայ պուլգար ժողովրդին միշտ կասկածիլ Ռուսներէն:

Առաջին իշխանին մահուան տասնամեակը լրացաւ անցած Նոյ. 18/5. ին:

Սօսորոնիցէին մէջ ներքին և արտաքին զործոց նախարարները յայտնեցին, որ կառավարութիւնը ջանքեր չպիտի ինչայէ երկրին տնտեսական զարգացման համար և բարեկամական յարաբերութիւն պիտի պահպանէ մեծ պետութեանց և Ռուսիոյ իրենց ազատարարին հետ, բայց երբեք չպիտի զիջանի Ռուսիոյ

սիրուն զօհել երկրին շահերը: Կառավարութիւնը պիտի աշխատի Մակեդոնիոյ մէջ ստեղծել զրուծիւն մը, որով կարենայ զժբազդ երկրը մտնել տնտեսական և քաղաքական յառաջդիմութեան ուղիին մէջ:

—Իշխանուհի Կլէմէնթինէի ինդիքին վրայ Խաւրոյ թագաւորն ալ 10,000 ֆր. նուիրեց ի նպատակ Մակեդոնիոյ գաղթականներուն:

—Վախնալով որ Պուլկարիայէն մտած ցորենի և ուրիշ արմատաց մէջ Մակեդոնացիք քօլէրայի միջբրայներ խառնելով թուրքիս կը զլկեն Սուլթանի կառավարութիւնը զմուսարութիւններ կը յարուցանէր այդ նիւթերու ներմուծման դէմ: Նաջովի ըրողքին վրայ Նըլաղէն հրաման եկաւ՝ վերցնել այդ մասին ձեռք առնուած միջոցները:

—Սահմանը անցնելուն համար ձերբակալուած Պուլկար զինուոր մը նաջովի զիմուսներուն վրայ ազատ արձակուեցաւ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Շքողայի մէջ գնդակահար սպաննուած է յունական հիւպատոսին կալուալը:

—Իրւանդիտական շրջաններու մէջ ամեն օր կը սպասուի երկու պետութեանց գործակալներու նշանակուելը:

—Սելանիկի հեծելազօրաց հազարապետ Նախի պէյ ինքնասպան եղած է: Պատճառները կուզուի քօղարկել:

—Ալէքսանդրէթի ամերիկեան հիւպատոսը Տէվիս պաշտպանած է ամերիկահպատակ հայ մը. որուն առջեւ թիւրք պաշտօնեաները դժուարութիւններ կը յարուցանէին: Ամերիկեան հիւպատոսի և թիւրք կառավարութեան մէջ պատահած են լուրջ միջպակներ:

—Չմիւռնիայի մէջ ժանտախտէն մեռած է մէկ հոգի: Նուեբը կը ձգեն նուահանդիստը և կը մեկնին:

ՄԱԿԵՂՈՆԵԱ

Ներքին կազմակերպութեան կողմէ Սարաֆով և Կէրէքով պիտի ուղեւորին Լօնտոն:

—Պելկրատի ուսանողները կը պատրաստուին փառաւոր ընդունելութիւն մը ընել Պօրիս Սարաֆովի: Պիտի կազմուի մեծ միութիւն մը, որուն պիտի մասնակցի նաեւ Սարաֆով:

ՌՈՒՍԻԱ

Քիչնէվի ամբաստանեալները պաշտպանող փաստաբանները մէկէն իմէկ պահանջած են վերա-

քննութիւն և ստաց. ծ մերժում, Երեւի դատարանը իր կողմէ կը նշանակէ պաշտպանողներ, բայց հրաժարեալ փաստաբանները որոշած են տիրի շտապ և Եւրոպայի ու Ռուսիոյ հասարակաց կարծիքին առջեւ պարզել հրէաստպանութեան ամբողջ կատակերգութիւնը: Կառավարութիւնը պիտի ջանայ ուստի կանութեան վարկը ամեն գնով փրկել, նոյն իսկ ոտնակոխ ընելով արդարութիւնը, բայց Ռուսիոյ մէջ ծրար արդարութիւն տիրեցէ:

—Ռուսիա ներսէն ու դուրսէն կը սկսի հիւանդանալ: Բլէհվէցցոյց իր գիւանդիտական ծայրահեղ անճարակութիւնը: Իր ուսացման սիստէմէն այսօր զժողոհ են նոյն իսկ ամենակծու ուսները: Փինլանտայի մէջ կայ մեծ եռուս: Յօրին զգացնել տրուած է Բլէհվէթի Ֆլեսսակար ընթացքը: Կիւրիչէ Յոյթուելո հրատարակեց Յարին մեծ հօր, Տանիմարքայի թագաւորին, Իեթերուպուրկի արքունիքը զրկած նամակէն կտոր մը: Մերուելի թագաւորը քիչ ատենէն պիտի ստնէ իր կառավարութեան յոբելեանը: Յորը նամակով փափաք յայտնած է իր մեծ հօր հանդէսին ներկայ գտնուել: Իհնա մօտաւորապէս Տանըմարքայի թագաւորին պատասխանը:

—Սերախ կրկույի յոբելեանիս հանդէսին առթիւ կայսերական մեծ որդիս ինչ մօտ ատեն լով, բայց կը հրաժարի՛ այդ հաճոյքէն, որովհետեւ Չեր կառավարութեան Փինլանտայի դէմ բռնած ընթացքը կատաղութեամբ լեցուցած է իմ և սկանտինավեան ժողովուրդները: Ուրեմն կը զգուշացնեմ որ չգաք:

Եւ արդարեւ ձերուելի թագաւորը իրաւունք ունի, երբ կուզէ իր ժողովրդի տրամադրութեան համաձայն վարուիլ:

—Բէթերսպուրկի մէջ պատահեցան ուսանողական խռովութիւններ: Ուստիկաւորութիւնը միջամտեց և ձեռնարկ ցրուեց ուսանողները, բայց վերջիններս իրենց պահանջներէն ետ չեն կենար:

ՍԵՐՊԻՍ

Յոնչէվ Պելկրատի մէջ գտաւ պաղ ընդունելութիւն. ան կուզէ Սարաֆովի ընթացքը քննել: Պելկրատ հաւաքուած են երկու կուսակցութիւնէն ալ մարդիկ:

—Պելկրատի մէջ երեւցան ուս լրտեսներ՝ Մակեդոնացի յեղափոխականներու քայլերուն հետեւելու համար:

—Սգուպչինայի մէջ եղաւ տաք վիճաբանութիւն և վերջացաւ ձեռնով:

Ն. ՄԱԿԱՏՈՒՓ

Փիլիպէ, Յարութիւն կարապետին. —Ընդհակառակը մենք շատ լաւ կարծիք ունինք Փիլիպէի մասնաւոր զպրոցին վրայ: Վախացիները դեռ երախտագիտութեամբ կը յիշեն իրենց նախկին ուսուցիչ՝ այժմ Փիլիպէի մասնաւոր զպրոցին վարիչ Պ. Պիոնեանի անունը, որու կարողութիւնը և բարեխղճութիւնը ամէն կասկածէ վեր է:

—Ալիսի. որդեգիր. — Ի ի թը հինցած է և շարժեր այդ մարդոց մով զբաղիլ: Հաղորդեցէք թարմ տեղեկութիւններ:

—Արտէմիսի խմբագրու. թիւն. — Արտէմիսը չենք ստանար: Հաճեցէք կանոնաորակալ զրկել:

—Էմիլ Շղարչեանց. — Չեր նա մակը նկատողութեան սուրուեցաւ: Հաղորդեցէք մեզ ձեր հասցէն:

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

Ե. Թոյմանի խմբագրած պատերազարդ «ԼՈՅՍ»

Գրպանի, Պատի և Սեղանի օրացոյցները:

«ԼՈՅՍ» օրացոյցները ՆՊԱՏԱԿՆ է պիտութեան լոյս սփռել ժողովրդի խաւար խտերում. հնար եղած չափով պատկերացնել հայի անցեալն ու ներկան, մշտական կրիւ մղել այն հրատարակութիւնների դէմ, որնք նիւթական շահերից զրգուած ստապալուելու և ազխութեան սերմեր են ցանում ընթերցողների շրջանում և առհասարակ ընթացքով թեան օգտակար նիւթ և անհրաժեշտ գիտելիքներ տարածել:

Այդ նպատակին հասնելու համար մենք չենք խնայել ոչ ջանք և ոչ նիւթական միջոցներ, աշխատակցութեան ենք հրաւիրել յայտնի հեղինակներ ու մասնագէտներ, բոլոր երեք օրացոյցներն էլ պատկերազարդել ենք յատուկ պատրաստել ստած նկարներով, իսկ բովանդակութիւնը դաւաճուել ենք այնպէս, որ օրացոյցների իւրաքանչիւր տեսակը տանձին վերցրած մի ամբողջութիւն կազմէ և միւռնոյն ժամանակ ցանկալի ու օգտակար լրացուցիչ լինի միւս երկուսի համար:

Պուլկարիայում գնել փափաքողները թող գիմեն Բուչուք Մ. Պատմաճեանի:

Գրիներն են. Գրպանի մէկ ֆր. Պատի 1,50, Սեղանի 5 ֆրանք:

Ծանօթ. — Գնողներու դիւրութիւնը ընծայուու համար դրամի փոխարկը ընդունում են նաեւ Պուլ. նամակագրօյմ: Բօստի ծախսը վաւարողին վրայ:

Է. Սկնունի
կովկասեան վէրքեր
Հրատարակութիւն Հ Յ. Գաշեակցութեան:
Գրին է 3 ֆրանք:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница «Взаимность» Варш